# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 28-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ավագանու 2021թ մայիսի 21-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 2021թ բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Լճաշեն համայանքի <<Առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ-ի շենքի հարող տարածքը պետությանը անհատույց տրամադրելու մասին:
3. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվության մասին:
4. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի թիվ 19-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5. Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի և <<Լճաշենի մանկական արվեստի դպրոց>>-ի 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների համար հուշանվերներ ձեռք բերելու մասին
6. Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներին, <<Մանչուկ >> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի սաներին, <<Լճաշենի մանկական արվեստի դպրոց >> ՀՈԱԿ-ի սովորողներին էքսկուրսիաներ գնալու համար տեղափոխման ծախսերը համայնքի բյուջեից կատարելու մասին:
7. Վերջին արցախյան պատերազմի ժամանակ զոհված զինծառայողներին պետական պարգև /շքանշան/ տրամադրելու ժամանակ, զոհվածների հարազատներին համայնքի բյուջեից դրամական օգնություն տրամադրելու մասին
8. Մայիսի 9-ին արցախյան վերջին պատերազմին մասնակցած կամավորներին, պահեստազորայիններին և վիրավորում ստացած զինծառայողներին դրամական օգնություն տրամադրելու մասին:
9. Լճաշեն համայնքի բնակիչ, հաշմանդամ՝ Արթուր Պետրոսյանին Պարականոե Վ-1 դասի աշխարհի գավթի խաղարկությանը մասնակցելու համար դրամական օգնություն տրամադրելու մասին:
10. Լճաշենի <<Մանչուկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին
11. Լճաշեն համայնքի բյուջեից <<Երդվյալ ազատամարտիկների միություն>> ՀԿ-ին դրամական հատկացում կատարելու մասին:
12. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 05-040-0038-0004 ծածկագրի 0.12718 հա, 05-040-0020-0008 ծածկագրի 0.05416 հա, 05-040-0021-0011 0.25384 հա, 05-040-0020-0007 ծածկագրի 0.23248 հա, 05-040-0020-0009 ծածկագրի 0.10471 հա, 05-040-0021-0015 ծածկագրի 0.12 հա, 05-040-0021-0014 ծածկագրի 0.12 հա 05-040-0021-0012 ծածկագրի 0.24318 հա, 05-040-0021-0009 ծածկագրի 0.63638 հա, 05-040-0021-0007 ծածկագրի 0.48 հա, 05-040-0021-0005 ծածկագրի 0.48577 հա, 05-040-0020-0004 ծածկագրի 0.75209 հա, 05-040-0021-0006

ծածկագրի 0.37221 հա, 05-040-0038-0005 ծածկագրի 0.17759 հա, 05-040-0021-0013 ծածկագրի 0.11708 հա, 05-040-0207-0011 ծածկագրի 0.3465հա, 05-040-0209-0015 ծածկագրի 0.1262հա, 05-040-0019-0005 ծածկագրի 0.25076 հա հողամասերի համար կրկնաճուրդ հայտարարելու և նոր մեկնարկային գին սահմանելու մասին

13. Լճաշեն համայնքի <<Մանչուկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմում ավագանու անդամի թեկնածություն առաջադրելու մասին
14. Լճաշեն համայնքի մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքների դրամական օգնություն տրամադրելու մասին
15. Լճաշեն համայնքում արևային էլեկտրակայանի ստեղծմանն ուղղված ծրագրին հավանություն տալու և աջակցելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 29-Ա

### ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով գրությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Առայժմ չհամաձայնել Լճաշեն համայնքի առողջության առաջնային պահպանման ՊՈԱԿ-ի շենքի հարող տարածքը պետությանը անհատույց տրամադրելու գործընթացին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 30-Ա

### ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի ԹԻՎ 19-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33 հոդվածի 1 մասի 1 կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ավագանու 2021թվականի մարտի 19-ի <<Լճաշենի մի խումբ բնակիչների դրամական օգնություն տրամադրելու մասին>> թիվ 19-Ա որոշման 1-ին կետի <<335.0 հազար դրամ>> բառերը փոփոխել <<345.0 հազար դրամ>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 31-Ա

### ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՏ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ, <<ԼՃԱՇԵՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ>> 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկվեց և հավանության արժանացավ Լճաշեն համայնքի ղեկավարի 19.05.2021թ թիվ 48-Ա որոշման դրույթները, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 41-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու կանոնակարգի դրույթները, ավագանու 22.01.2021թ թիվ 06-Ն որոշման դրույթները, ավագանին որոշում է՝

1. Համայնքի վարչական բյուջեի Հանրակրթական ուսուցում բաժին 09 խումբ 2 դաս 2 ծրագիր 51 հոդված 4237 հատկացնել 370.0 հազար դրամ Լճաշեն համայնքի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցը, <<Լճաշենի մանկական արվեստի դպրոց>> ավարտող 46 շրջանավարտներին, 7 ուսուցիչների/դասվար, դասղեկ, դասատու/ 2 տնօրեններին հուշանվերներ տալու համար /կից ներկայացվում է ցուցակը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 32-Ա

### ԼՃԱՇԵՆԻ ԱՇՈՏ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, <<ՄԱՆՉՈՒԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՍԱՆԵՐԻՆ, <<ԼՃԱՇԵՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ, ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ ԳՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 46 հոդվածի պահանջներով և համայնքի ղեկավարի 2021թ մայիսի 19-ի թիվ 49-Ա որոշման դրույթները, համայնքի ավագանին որոշում է՝

Լճաշենի Աշոտ Տեր- Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներին, <<Մանչուկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի սաներին, <<Լճաշենի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի սովորողներին, էքսկուրսիաներ գնալու համար, համայնքի վարչական բյուջեի հանգիստ և սպորտ՝ բաժի 08 խումբ 01 դաս 01 հոդված 4239-ից 900.0 հազար դրամ հատկացնել տեղափոխման ծախսերը կատարելու համար:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 33-Ա

### ՎԵՐՋԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ/ՇՔԱՆՇԱՆ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ, ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 40 հոդվածի 2-րդ մասի 1 կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Վերջին Արցախյան պատերազմի ժամանակ զոհված զինծառայողներին պետական պարգևներ/ շքանշան/ տրամադրելու ժամանակ, համայնքի բյուջեի Պաշտպանություն՝ բաժին 02 խումբ 05 դաս 01 ծրագիր 51 հոդված 4729-ից յուրաքանչյուր զոհվածի ընտանիքի տրամադրել 50000-ական դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 34-Ա

### ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 40 հոդվածի 2-րդ մասի 1 կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Մայիսի 9-ին Արցախյան վերջին պատերազմին մասնակցած կամավորներին և վիրավորում ստացած զինծառայողներին՝ թվով 52 հոգի, համայնքի վարչական բյուջեի պաշտպանություն՝ բաժինի 02 խումբ 05 դաս 01 ծրագիր 51 հոդված 4729-ից 780.0 հազար դրամ տրամադրել դրամական օգնություն, յուրաքանչյուրին 15000-ական դրամ: Ցուցակը կցվում է
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  ԼՃԱՇԵՆ  ՀԱՄԱՅՆՔԻ  ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության  Գեղարքունիքի մարզի  Լճաշեն համայնք
ՀՀ,  Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 35-Ա

### ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ, ՀԱՇՄԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՐԱԿԱՆՈԵ Վ-1 ԴԱՍԻ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 47 հոդվածի 1 մասի պահանջներով և հիքմ ընդունելով համայնքի ղեկավարի 19.05.20201թ թիվ 49-Ա որոշման դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Լճաշեն համայնքի բնակիչ, I կարգի հաշմանդամ Արթուր Պետրոսյանին Հունգարիայի Ցեգենտ քաղաքում անցկացվող Պարականոե Վ-1 դասի աշխարհի գավաթի խաղարկությանը մասնակցելու համար համայնքի վարչական բյուջեի հանգիստ և սպորտ՝ բաժին 08 խումբ 01 դաս 01 հոդված 4722ից հատկացնել 100.0 հազար դրամ դրամական օգնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 36-Ա

## ԼՃՇԵՆԻ <<ՄԱՆՉՈՒԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ_Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1 մասին, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 33 հոդվածի 1 մասի 1 կետի պահանջներով, և հիմք ընդունելով Լճաշեն համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 26-ի թիվ 57-ա որոշման դրույթները, համայնքի ավագանին որոշում է

1. Գեղարքունիքի Մարզի Լճաշեն համայնքի ավագանու 2020թվականի նոյեմբերի 26-ի թիվ 57-Ա որոշմամբ հաստատված Լճաշենի <<Մանչուկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1/Որոշման թիվ 2 հավելվածում՝ <<Լվացքարարի>> հաստիքային միավորը<<0.25>> թիվը դարձնել<<0.5>>

2/ Հաստիքացուցակում ավելացնել <<գործավար>> հաստիքը, հաստիքային միավորը <<0.75>>, պաշտոնային դրույքաչափը <<68500>> դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ հունիսի 1-ին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 37-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1 մասի 5-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 56 հոդվածի 2-րդ մասի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Լճաշեն համայնքի վարչական բյուջեի Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում բաժին 01, խումբ 01 դաս 01 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ՝ հոդված 4111-ից 1000.0 հազար դրամ, Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01, խումբ 06 դաս 01 գույքի և սարքավորումների վարձակալություն հոդված 4216-ից 400.0 հազար դրամ, Ներքին գործուղումներ՝ հոդված 4221-ից 500.0 հազար դրամ, Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) բաժին 02, խումբ 05 դաս 01 Գրասենյակային նյութեր և հագուստ՝ հոդված 4261-ից 400.0 հազար դրամ, Գյուղատնտեսություն բաժին 04, խումբ 02 դաս 01 այլ կապիտալ դրամաշնորհներ հոդված 4657-ից 1 000.0 հազար դրամ, Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ բաժին 08, խումբ 02 դաս 03 Մասնագիտական ծառայություններ՝ հոդված 4241-ից 500.0 հազար դրամ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ բաժին 08, խումբ 04 դաս 02 Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին հոդված՝ 4819-ից 1100.0 հազար դրամ պակասեցնել և ավելացնել Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) բաժին 02, խումբ 05 դաս 01Այլ նպաստներ բյուջեից՝ հոդված 4729-ին 1200.0 հազար դրամ և հաստատել 1400.0 հազար դրամ: Գյուղատնտեսություն՝ բաժին 04, խումբ 02 դաս 01 Գյուղատնտեսական ապրանքներ՝հոդված 4262-ին 100.0 հազար դրամ և հաստատել 300.0 հազար դրամ, Աղբահանություն և սանմաքրում `բաժին 05 խումբ 01 դաս 01, հոդված 4213-ին 400.0 հազար դրամ և հաստատել 2400.0 հազար դրամ, Հանգստի և սպորտի ծառայություններ՝բաժին 08 խումբ 01 դաս 01 Էներգետիկ ծառայություններ՝հոդված 4212-ին 500.0 հազար դրամ և հաստատել 2100.0 հազար դրամ, Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝հոդված 4239-ին 900.0 հազար դրամ և հաստատել 900.0 հազար դրամ, կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից՝հոդված 4727-ին 200.0 հազար դրամ և հաստատել 400.0 հազար դրամ, Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ՝բաժին 08 խումբ 02 դաս 03 Գրասենյակային նյութեր և հագուստ՝հոդված 4261-ին 100.0 հազար դրամ և հաստատել 100.0 հազար դրամ, Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն բաժին 09 խումբ 02 դաս 02, Ներկայացուցչական ծախսեր՝հոդված 4237-ին 200.0 հազար դրամ և հաստատել 400.0 հազար դրամ, Գործազրկություն՝բաժին 10, խումբ 03 դաս 01 Հուղարկավորության նպաստներ բյուջեից՝հոդված 4726-ին 500.0 հազար դրամ և հաստատել 1500.0 հազար դրամ, Գործազրկություն բաժին 10 խումբ 04 դաս 01 երեխայի ծննդյան նպաստ հոդված՝4722-ին 100 հազար ՀՀ դրամ և հաստատել 1100,0 հազար ՀՀ դրամ,Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) բաժին 10 խումն 07 դաս 01, այլ նպաստներ բյուջեից՝հոդված 4729-ին 700.0 հազար դրամ և հաստատել 2030.0 հազար դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝**  **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 38-Ա

### ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ <<ԵՐԴՎՅԱԼ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ_ԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՂեկավարվելովՅայաստանիՅանրապետության <<Տեղականինքնակառավարմանմասին>> օրենքի 18 հոդվածի,
35 հոդվածիպահանջներով, ևհիմքընդունելով << Սևանիերդվյալազատամարտիկներիմիություն >> ՅԿ-ինախագահի 09.04.2021թթիվ 3 գրությունը, համայնքիավագանինորոշումէ՝

1. Լճաշեն համայնքի վարչական բյուջեի Բաժին 08 խումբ 04 դաս 02 հասարակական կազմակերպությունների անդամավճար հոդված 4819-ից 60000 դրամ փոխանցել << Սևանի երդվյալ ազատամարտիկներ>> ՀԿ-ին՝ 1990-1994թթ պատերազմական գործողությունների, 2016թ <<Քառօրյա>> պատերազմի և 2020թ պատերազմի մասնակիցներին դրամական օգնություն տրամադրելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 43-Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 202 1թ առաջին եռամսյակի բյուջեն կատարվել է 105.2%-ով, պլանով նախատեսված 39425.0 հազար դրամի դիմաց կատարվել է 41465.5 հազար դրամ, պլանը գերակատարվել է 2040.5 հազար դրամ, նույն ժամանակահատվածի համար 2020թ պլանը կատարվել է 103.5 %-ով:

2021թ համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել է 130.4%, այսինքն պլանով նախատեսված 6827.83 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 8901.0 հազար դրամ, այսինքն պլանը գերակատարվել է 2073.17 հազար դրամ: Նույն ժամանակահատվածի համար 2020թ պլանը կատարվել է 110.7 %-ով:

2021թ բյուջեի ծախսային մասը առաջին եռամսյակում կատարվել է 89.3%-ով, այսինքն պլանավորված 52105.1 հազար դրամի դիմաց կատարվել է 46558.3 հազար դրամ, իսկ վարչական բյուջեն կատարվել է 68.29 %-ով, պլանավորված 39425.0 հազար դրամի դիմաց կատարվել է 26924.7հազար դրամով.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1 մասի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է

1. Ընդունել ի գիտություն համայնքի 2021թ տեղական բյուջեի առաջին եռամսյակային հաշվետվության մասին հաղորդումը/կից ներկայացվում է հավելված 1;2;3;4;5/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՍՐՈՎ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**